Ֆարսախ հեռաւորութեամբ, մի հովտում փռւած է պարսկա-հայաբնակ Ադիգան գիւղը, որի 45 տունը հայեր են 298 շնչով, դրա 158-ը արական է և 140-ը իգական։ Այդտեղ տները մի, և մասամբ էլ երկյարկանի են, իսկ փողոցները ծուռումուռ, բայց գիւղը դիրքով գեղեցիկ է և բանաստեղծական. զարդարւած է ուռենիների և բարդիների տնկարաններով և ունի սառնորակ աղբիւրներ, որոնք բղխում են նրա փէշերից, բացի այդ գիւղի առջևից վազում է մի առու, որը ոռոգելով Ադիգանի դաշտավայրերը, ոլորապտոյտ անցնում է գիւղի փէշերից։

Գիւղն իր հողերով խանական է. պատկանում է Թաճի-Մահմէտ և Ալի-Մահմէտ խաներին։ Գիւղացիները հողազուրկ են. նրանք մշակում են աղանների հողերը, որից ստացւած արդիւնքի $^1/_3$ մասը տալիս են նրանց. բացի այդ տարեկան վճարում են խաներին.

Մարդագլուխ	3 դրան	Էշին	$2^1/_2$ դրան
Կովին	$2^1/_2$ »	Զորս ոչխարին	$2^1/_2$ »

Մօտաւորապէս տարեկան 70 թուման փող են տալիս։ Այստեղ հողը մասամբ ջրովի է և մասամբ դէմի. հերկում են արօրով ու ջրում 5—6 անգամ։ Ցանում են նոյն հացաբոյսերը։

Ինչպէս միւս գիւղերն, այնպէս էլ այս գիւղն ենթակայ է հարստահարութիւնների—աղաների և աւազակների կողմից։ Գիւղի քէդխուդան՝ պ. Եաղուբը, որի տունը իջևանել էի, երկու բառերով բնորոշում էր գիւղի դրութիւնը. —Անտէր երկիր է, վարժապետ ջան,—բացականչեց նա դառնալով դէպի ինձ,-մենք ցանում ենք, ընտանք (աղաները) տանում են, գալիս են գիւղ, առնում փող, օղչար և էլի ետ չեն դարձնում։ Գողութիւնն, այժն ասես էլ ղաբզ ու բարաթ (հաշիւ) չունի, դեռ երկու ամիս առաջ էր, որ Զրաղ-Ալի խանի մարդիկը հանդից տարան գիւղի 700 օղչարները և 7 կովը։ Ցանում են, ով է կարողանում խօսել . . . և նա կամաց օրօրեց իր գլուխը։ Ես ընկայ տխուր մտածողութիւնների մէջ։